

կով խոստանում է պատմվածք ուղարկել ժողովածվի համար»⁸:

Բայց քանի որ, դժբախտաբար, Աբովյանին նվիրվելիք ժողովածուն ինչ-ինչ պատճառով այդպես էլ լույս չի տեսնում, Պռոշյանն ստիպված այդ հոդվածը ուղարկում է Մկրտիչ Բարխուդարյանին, որն էլ 1895 թվականին տպագրում է իր խմբագրությամբ լույս տեսնող «Հանդես գրականական և պատմական»-ի թիվ 6-ում (էջ 93-104):

Ավելացնենք նաև, որ Ալեքսանդր Ծատուրյանը նույն նպատակով և նման բովանդակությամբ նամակներ է գրել մեր գրեթե բոլոր նշանավոր գրողներին:

Բազմիցս Պռոշյանը խոստովանել է, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել խաչատուր Աբովյանը իր գրական կյանքում, և որ ինքը պատկանում է աբովյանական գրական դպրոցին:

Հիշենք ռուս անվանի գրականագետ, թարգմանիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Յուրի Վեսելովսկու 1902 թվականի հոկտեմբերի 6-ի՝ Պերժ Պռոշյանին հասցեագրած նամակն ու նրա պատասխանը:

«Մեծապատիվ պարոն,- ասված է այդ նամակում,- մոտ ապագայում նախատեսելով գրել հայ գրականության վրա ռուսաց գրականության ունեցած ազդեցության մասին, ցույց տալու համար, որ հայ գրողները, հարկավ, օտար չեն ռուս մտավոր կյանքին, երախտապարտ կլինեի ձեզ, եթե բացահայտորեն պատասխանեիք հետևյալ հարցերին.

1. Որևէ բանով ռուս գրականության ազդեցությունը- ի դեմս նրա առանձին ներկայացուցիչների- Ձեզ պարտական համարում եք:

2. Եթե այո, ապա ավելի շատ ո՞ր գրողները և նրանց ո՞ր երկերն են առանձնապես ազդել Ձեզ վրա:

3. Այդ ազդեցությունը, արդյոք, չի՞ արտահայտվել Ձեր որևէ երկում»⁹:

Թիֆլիսից բացակայելու պատճառով Վեսելովսկու այս նամակը շատ ուշ է հասնում Պռոշյանին: Եվ ահա նույն թվականի դեկտեմբերի վերջին Վեսելովսկուն գրած նամակում վիպասանը ցավով ու ափսոսանքով հայտնում է, որ ոչ միայն նամակն է ուշ ստացել, այլև Մոսկվայում ու Պետերբուրգում եղած ժամանակ ինքն այլևայլ հանգամանքների պատճառով չի կարողացել անձամբ հանդիպել «հայ գրականության սիրահար» և հազվագյուտ մարդու Վեսելովսկու հետ: Այսուհանդերձ Պռոշյանը թեև ուշացումով, բայց համառոտակի պատասխանում է Վեսելովսկու հարցերին: «... Միակ անձնավորությունը,- ասվում է այդ նամակում,- որ անմիջական ազդիչ մասնակցություն ունի իմ ամբողջ գրական աշխատասիրությանց մեջ, սկսած 60 թվի հունվարից լույս տեսած «Սոս և Վարդիթեր» անդրանիկ վիպասանությունից մինչև վերջին գրական երկս, եղել է, լինում է և լինելու է անմահ խաչատուր Աբովյանը: Նրա «Վերջ Հայաստանին» մտավոր խթան է հանդիսացել ինձ համար, նրա շկոլային եմ անձնահոգժար ենթարկել ինձ, և այդ ուղղության մեջ սիրելի է ինձ թույլ գրչիս վերջին ճովողունը դադարեցնել»¹⁰:

Որ Պռոշյանն իրոք եղել է խաչատուր Աբովյանի արժանավոր աշակերտը, դա դեռ շատ վաղուց նկատել են Հակոբ Կարենյանը, Միքայել Նալբանդյանը, Ղազարոս Աղայանը, իսկ հետագայում՝ Արշակ Զոպանյանը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշները:

Պռոշյանի վկայությամբ՝ Հակոբ Կարենյանը «Սոս և Վարդիթեր» վեպը կարդալուց հետո ասել է. «Այս վիպասանությունովդ դու Աբովյանի շավիղին ես հետևում, շնորհավորում եմ»¹¹:

Ուսուցիչը միաժամանակ կանխագուշակել է իր սանի ապագան. «-Լավ ես սկսել, շարունակիր, իմ գուշակություններս կատարվում են, աշխարհաբարի հարազատ մշակներից մեկն ես լինելու»¹²:

Կարենյանը իրավացի էր, Պռոշյանը արդարացրեց իր ուսուցչի բոլոր հույսերը: Նա, իրոք, դարձավ «աշխարհաբարի հարազատ մշակներից մեկը»:

Միքայել Նալբանդյանը, Պետրոպավլովյան բանտում կարդալով Պերժ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» անդրանիկ վեպը, հատուկ ուսումնասիրություն է գրում, ուր այն միտքն է հայտնում, որ «Աբովյանի «Վերջ Հայաստանին» և «Սոս և Վարդիթերը» հիմք դրին արդյան ազգային վիպասանության»:

Նալբանդյանի այս ուսումնասիրությունից ավելի քան երկու տասնամյակ հետո՝ 1888-ին գրած իր «Պերժ Պռոշյանց և իր «Սոս և Վարդիթերը» հոդվածում Ղազարոս Աղայանը, խոսելով Պերժ Պռոշյանի գրական մուտքի մասին, գրում է, թե Ալիշանն ու Աբովյանը «դեռևս պատանի Պռոշյանին փոփոխակի քաշեին դեպի իրանց: Նախքան Աբովյանի գրության դուրս գալը Պռոշյանը պատվում է նահապետի շուրջը, բայց դեռ կես ճանապարհի՝ նրան հափշտակում է Աբովյանի Աղանին...»¹³:

Ավելացնենք նաև, որ «նախքան Աբովյանի գրության դուրս գալը» ասելով Աղայանը նկատի ունի «Վերջ Հայաստանի» վեպի տպագրությունը /1858/: Ապա հոդվածագիրը ավելացնում է. «Մեզանից ու՞մ խելք ու միտք, ու՞մ սիրտ չէ հափշտակել Աբովյանի գրությունը, բայց Պռոշյանի հափշտակվիլը բոլորովին այլ է: Ամեն մարդ հիպնոտիզմի ենթարկվելու հատկություն չունի. կեկտրականությունն ամեն

մարմնի միջով հեշտությամբ չի անցնում, կան լավ և վատ հաղորդիչներ»¹⁴:

Աղայանի կարծիքով Պռոշյանի մարմնով էլեկտրականությունը հեշտությամբ է անցել, ասել է՝ թե նա Աբովյանով միանգամից է հրապուրվել:

Իսկ 1899 թվականի Փարիզի «Անահիտ» հանդեսի 5-6-րդ միացյալ համարում անվանի գրականագետ Արշակ Զոպանյանը Պերժ Պռոշյանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ գրում է. «Մենք այժմեն կուղարկենք մեր սրտագին շնորհավորություններն ու խորին մեծարանքը «Սոս և Վարդիթերի» սիրուն վիպողին և վստահ ենք, որ հայ ժողովուրդը հարգանքով մը պիտի պաշարե հոբելյանը այդ պարզ ու անկեղծ բանաստեղծին, որ Աբովյանն հետո ամենեն կենդանի երգիչը եղավ հայ գյուղին»: Դեռ ավելին, նույն հանդեսի 8-րդ համարում զետեղած «Պերժ Պռոշյանց» վերնագրով կենսագրական ակնարկում Արշակ Զոպանյանը ավելացնում է. «Կողջունենք Պռոշյանը իբրև ժողովրդական վեպին վարպետը հայոց մեջ, Աբովյանն հետո:

Աբովյան ռոմանտիկ երգիչն էր այդ ժողովրդական գրականության, Պռոշյանց անոր իրապաշտ վիպասանը եղավ»:

Հովհաննես Թումանյանն էլ իր մասնակցությունն է բերել ծերունագարդ գրողի հոբելյանին: Նա «Մեր ազգային վիպասան Պերժ Պռոշյանցին՝ իր քառասնամյակին» բանաստեղծության մեջ ընդգծելով այն միտքը, որ գրողը իր բեմելի շրջանից սկսած ուսուցիչ է ընտրել «Ազգի վերքերն ողբերգողին» խաչատուր Աբովյանին և քառասուն տարի շարունակ քայլել նրա ուղիով, գրում է.

Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ

Ազգի վերքերն ողբերգողին,

Քառասուն տարի ձեռքիդ գըրիչ

Անցար, բռնած նըրա ուղին»¹⁵:

Հետաքրքիր է, որ Հակոբ Հակոբյանն էլ անվանի վիպասանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ 1899 թվականին գրած «Պ. Պռոշյանին» բանաստեղծության մեջ այն միտքն է հայտնում, թե ինչպես, իբրև մեծ ուսուցիչ, խաչատուր Աբովյանն էլ «հարազատ հորս պես» մասնակցում է «իրա անդրանիկ սիրած սանիկի» հոբելյանին և բազմավաստակ ծեր վիպասանին ջերմ ծափահարում», ասելով՝

-Արժանի ես դու, սիրելի սանիկ,

նորեկ սերնդի

Սրտաբուխ գովքին. օրհնում եմ ես քեզ

անհուն բերկրությամբ,

Որ թողած պատգամս իրագործեցիր

բարեխղճությամբ

Եվ վարժապետիդ գծած ուղիով անցար

քաջությամբ»¹⁶ ...

Այսուհանդերձ, չպետք է մոռանալ նաև, որ Բաֆֆու պես մի հանրահայտ գրող, իր «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածում, որի գրելու շարժառիթը եղել է «Կայծերի» շուրջը Աղայանի հետ ունեցած վեճը, գրում է. «Ռուսահայ նոր գրականության մեջ վիպագրության առաջին օրինակը տվեց Աբովյանը: Նա գրեց մի գիրք միայն և իր հետևից քարշ տվեց հետևողների մի ամբողջ շարք»¹⁷:

Բաֆֆին իրավացի է, երբ «ռուսահայ նոր գրականության մեջ» առաջին վիպագրի պատիվը տալիս է Աբովյանին. բայց երբ գրում է, թե նա «իր հետևից քարշ տվեց հետևողների մի ամբողջ շարք», այն էլ ընդգծված հեզմանքով, այսպեղ մեծ գրողը իրավացի չէ, քանզի նրա ասածը այնքան թափանցիկ է, որ իսկույն հասկացվում է, թե որ գրողների մասին է խոսքը: Անշուշտ բոլորն են հասկանում, որ Բաֆֆու խոսքը ամենից առաջ և ամենից շատ վերաբերում է Պերժ Պռոշյանին և Ղազարոս Աղայանին: Դեռ ավելին, շարունակելով իր միտքը, Բաֆֆին ավելի է խտնացնում գույները. նրա կարծիքով «Աբովյանի հետևողները Աբովյանի անշուրիք աշակերտները եղան»:

Փաստորեն Բաֆֆին անուղղակի ձևով ընդգծում է այն միտքը, թե իբր «Աբովյանի աշակերտները», ասել է թե Պռոշյանն ու Աղայանը Աբովյանից հետո նրա արածին ոչինչ չեն ավելացրել, մնացել են նույն կետում: Բայց մի՞թե դա ճիշտ է:

Մեզ թվում է՝ այս հախուռն ժխտման պատճառն այն է, որ հոդվածը գրվել է Աբովյանի աշակերտներից մեկի՝ Աղայանի հետ ունեցած վեճի տաք ու թարմ տպավորության տակ:

Ինչևէ:

Իրավացի է գրականագետ Հրայր Մուրադյանը, երբ գրում է, թե Աբովյանի մասին մեր գրողներից շատերն են իրենց համակրանքը, սերն ու հիացմունքը հայտնել, բայց նրանցից և ոչ մեկը այնպիսի ջեր-

⁸ Նույն տեղում, էջ 34

⁹ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 560:

¹⁰ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 508-509:

¹¹ Նույն տեղում, էջ 226:

¹² Նույն տեղում, էջ 195:

¹³ Ղ. Վղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան 1963, էջ 157:

¹⁴ Նույն տեղում, էջ 158:

¹⁵ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1969, էջ 157:

¹⁶ Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 238:

¹⁷ Հայ գրաքննադատության քրեստոմատիա, հ. 2, Երևան, 1984, էջ 99:

մությամբ, ակնածանքով ու երախտագիտութեամբ չի հիշել Աբովյանին, ինչպես Պռոշյանը:

Իրոք, խաչատուր Աբովյանը Պռոշյանին հետաքրքրել է ամբողջ կյանքում: Մեծ Լուսավորչի կերպարին Պռոշյանը դիմել է ամենատարբեր առիթներով:

Ամեն անգամ, երբ խոսք է եղել Աբովյանի մասին, վիպասանը երախտապարտ աշակերտի սրբազան երկյուղածութեամբ աշխատել է արտահայտել իր սերն ու նվիրվածությունը, որևէ ձևով մեծարման ու երախտի խոսք ասել սիրելի ուսուցչի մասին: Այսպես. նա մեկ մանրամասնորեն նկարագրում է Աբովյանի այցելությունը Աշտարակ իրենց դպրոց, մեկ «Վերջ Զայաստանի» վեպի հիման վրա գրում «Աղասի» ազգային ողբերգությունը, որը 1863-ին տպագրվում է «Կռուկ» հանդեսում, իսկ հաջորդ տարին բեմադրվում Թիֆլիսում, մեկ 1890-ական թվականների սկզբներին Աբովյանի կյանքի ու անձնավորության մասին ուշագրավ տեղեկություններ հաղորդում նրա առաջին կենսագիրներից մեկին՝ Ներսես Տեր-Կարապետյանին, մեկ հոր պատմածով հաստատում «Վերջ Զայաստանի» վեպի գլխավոր հերոսի՝ Աղասու իրական, պատմական անձնավորություն լինելու հանգամանքը:

Աշակերտելով Աբովյանին՝ Պռոշյանը ոչ միայն «Սոս և Վարդիթեր» ու «Աղասի» երկերում, այլև դրանցից հետո գրած «Կռվածաղիկ», «Յացի խնդիր», «Յեցեր», «Բղդե», «Յունոն» և այլ գործերում միշտ հարազատ մնաց իր սիրելի ուսուցչի քարոզած գաղափարներին, նրա նման կանգնեց թույլի ու անօգնականի պաշտպանության դիրքերում, խոր ու բազմակողմանիորեն պատկերեց հայ գյուղի ու գյուղացիության կյանքն ու կենցաղը, բացահայտեց ժամանակի սոցիալական հակասությունները, մերկացրեց գյուղական ցեցերի ու ցարական չինովնիկների կամայականությունները, կերտեց ըմբոստ գյուղացիների մի շարք կերպարներ և աշխատեց հրաժարվել բարբառային բառերի անհարկի գործածությունից: Ապա Թիֆլիսում, Շուշիում, Ագուլիսում, Աստրախանում և այլուր հիմնադրեց օրիորդաց և երկսեռ դպրոցներ, զբաղվեց ուսուցչությամբ, կատարեց թարգմանություններ ռուս և եվրոպական գրողներից՝ միշտ հետևելով Աբովյանին և քայլելով նրա ճանապարհով:

ԳՎԱՄՈՒՄԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԺԱՄՆԱԿԱԿԻՑ ՏԵՍԱԿՅՈՒՆԻՑ

ԳԱՅԱՆԵ ՂԱՐԲԻՆՅԱՆ

Սկսած անցյալ դարավերջից հայ գրականության մեջ ծավալվեց մի բանավեճ: Եթե ընդունենք, որ բանավեճերը հող են նախապատրաստում ճշմարտության համար, ուրեմն այդ այնքան էլ ավելորդ չէր: 19-րդ դարավերջի թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ հասարակական-քաղաքական կյանքը, գրական օրապատշաճ հոսանքների առատությունը, դասականները և միջակությունները ավելի էին նպաստում բանավեճի հրահրմանը:

Իհարկե, բուն կյանքի հակասություններին արվեստի բանաձևերով լուծում տալը դժվարին խնդիր էր: Սակայն գրողների և գործիչների, մտավորականության կոչումը հասարակական ճիշտ գիտակցություն ձևավորելն է, հասարակական-քաղաքական և գրական խնդիրների համակցում միաբերումը: Կարծում ենք, որ այս խնդրում իրենց դերն են կատարել գրական ազդեցություններն ու նորարարությունները, մինչև վերջ չմարսված տարաշխարհիկ հասկացությունները:

Իրար են հակադրվել գրական ավանդապաշտներն և գրական նորարարները, ընտրյալները և ուղեկիցները: Այս առանձնահատկությունը միշտ էլ ուղեկից է գրական ընթացքին: Երկու բանակի բաժանված հայ գրագետների հարցադրումը պարզ էր, խորքային ու արդիական, ածանցված ժամանակի չափանիշներից: Առաջընթացի և կապիտալացման այդ օրերին զգալիքներն կարևորվել էր նաև գրականության դերը՝ ի՞նչ գաղափարներից էր նա ելնում կամ ի՞նչ գաղափարների պետք է ընդառաջի: «Մեր գրականությունը մեկ է ... բոլոր հայերուն ժառանգությունն է ան», - կարգախոսում է այդ օրերին Կոստան Չարյանը: Սակայն այդ մեկ «Յայաստանյայց /Վաղվան/ գրականությունը ճյուղավորվել էր ու մասնատվել՝ Արվեստագետ սերունդ, Գեղապաշտներ, գավառագիրներ և գրական հեթանոսներ: Ելնելով «Վաղվան գրականության» առաջադիր դրույթներից՝ գրական բոլոր ուղղություններն էլ փորձում են տալ ժամանակի իրենց գնահատականը, մանավանդ իրենց գործերով նպաստել ազգային կյանքի ընթացքին: Դարավերջի արևմտահայ և արևելահայ իրականությունը ապրում էր անհամագիստ ժամանակներ, և իրենց դարի անկումներն ու տագնապները գրող-գործիչները փորձում էին բացատրել կամ իմաստավորել յուրովի, հիմքում պահպանելով ազգային ու ավանդականը»:

Որքան էլ Արվեստագետ սերունդը ստեղծագործեր Ֆրանսիական գրական ազդեցությամբ, այսուամենայնիվ, նրանք ելնում էին ազգային օրախնդիրներից ու չափանիշներից: Նրանց էական գործերը սկսում էին ազգային արժատներով, բուն հայկական կյանքի դրսևորումներով: Արվեստագետ սերնդի մուտքը գրականություն նախապատրաստված-հիմնավորված էր Չարթունքի և Վերածննդի սերունդներով: Սննդաբար այդ ենթահողից շվարձակած թե՛ գեղապաշտների, թե՛ Արվեստագետների օտարանցիկ դեգերումները նրանց կրկին վերադարձնում էին ազգային ակունքներին: Եվրոպական չափանիշներին և հեղինակություններին հետամուտ գրողները ի վերջո համոզվում էին՝ որ համամարդկայինն ու գերժամանակակիցը միշտ էլ ազգային ածանցումներն են:

19-րդ դարավերջի Վաղվան գրականության ճյուղերից և՛ գրական հեթանոսները, և՛ գավառագիրներն էապես էին մերժում վերոհիշյալը, ձգտում պահպանել էթնիկ միջերը և առարկայացված պատմական ճշմարտությունները: Նրանք, կարելի է ասել, հակադրված էին իրենց դարի քաղաքակրթությանն ու նրա մերժելի կողմերին:

Գրական օրապատշաճներին նրանք հակադրում էին հայրենի գրականության և պատմության անեղծելի ավանդներով: Արդյունքում, գրական այս ուղղությունները շարունակեցին և խորացրին Չարթունքը և Վերածննդը հայ գրականության մեջ, ասպարեզ բերեցին վերածննդյան հումանիստական գաղափարները: Վերադարձը դեպի անցյալ, այսինքն՝ դաժնական հնաշխարհի կամ միջնադար, նաև իրօրյա արժեքների պահպանումը նրանց խնդիրն էր:

Այդ են առանձնաշեշտում արևմտահայ գրականության պատմաբաններից Մ. Թեյլեյանը և Վրդ. Ճանաչյանը: Վերադարձը դեպի արժատներն ու սկիզբը, այսինքն Վերածննդը թարմություն ու շունչ հաղորդեց հայրենի մշակույթին և գրականությանը, վերածնեց հիմնավորը ու փոշեթաթախ միջերը և այլ արժեքներ:

Երևույթ իր հատկանշական կողմերով հաստատում է նախանշված Վերածննդը հայ իրականության մեջ: Վերածնունդ-Չարթունք-Հեթանոսություն՝ ահա 18-19-րդ դդ. հայ գրականության ուղին: Այն ըստ էության սկզբնավորվում է Մխիթարյաններով:

Քննական ուսումնասիրության դեպքում համանման գրական երևույթը առկայում է նաև այլ գրականություններում, այսինքն վերածվում է գրական օրինաչափության: Անցյալի հիշերգությունը կամ վերազարթնեցումը Զայաստանյայց գրականության վերոհիշյալ ճյուղերում արտահայտվեց տարբեր կերպ. եթե հեթանոսականների մոտ այն գեղարվեստական-գեղագիտական ծրագիր էր ու հավատամք, ապա գավառագիրների մոտ այն առավել անկաշկանդ էր, առանց գեղարվեստական պայմանականությունների: Արդյունքում գավառական գրականության մեջ (արևմտահայ-արևելահայ) ընդգծվեցին և որոշարկվեցին հայոց հին (ա-